ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«28» հունիս 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Ս. Անանյան

ԱՑ-ԳԲԽ-10/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.03.2016թ. թիվ 1/73-1/10188-16 գրությամբ ներկայացված «ԵՎՐՈԼԻՖՏ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03538344) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն), Երևանի քաղաքապետարանի 25.08.2015թ. թիվ 01/61-18614 գրության հիման վրա, 28.08.2015թ. թիվ 1/73-1/23363-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «Եվրոլիֆտ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը վերը նշված գրությամբ Կենտրոնին է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի 25.08.2015թ. թիվ 01/61-18614 գրության պատճենը:

Կենտրոնը 17.03.2016թ. թիվ 01/04.1/1012-16 գրությամբ Նախարարության 28.08.2015թ. թիվ 1/73-1/23363-15 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ Կենտրոն) կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է «Եվրոլիֆտ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-15/1-1» ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագրով ստանձնած պարտավորություններն ավելի քան մեկ անգամ խախտելու առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից ***մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (14.08.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «ԵՎՐՈԼԻՖՏ» ՍՊԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Միաժամանակ նույն գրությամբ Կենտրոնը խնդրել է Նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 18.03.2016թ. թիվ 1/73-1/10188-16 գրությամբ, վկայակոչել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 122.2-րդ և 123-րդ կետերը, հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Եվրոլիֆտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Եվրոլիֆտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 17.02.2016թ. թիվ 01/04.1/499-16 գրությամբ դիմել է «Եվրոլիֆտ» ՍՊԸ-ին:

«ԵՎՐՈԼԻՖՏ» ՍՊԸ-ն 26.02.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերությունը չի կարողացել ամբողջությամբ մատակարարել «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-15/1-1» պայմանագրի գնման առարկա հանդիսացող ապրանքները, որի հետևանքով Պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանի լուծվել է: Ընկերությունը նշել է նաև, որ չի առարկում ընդունվող որոշումների դեմ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-10/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 25.08.2015թ. թիվ 01/61-18614 գրությամբ ներկայացրել է «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-15/1-1» ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագրին (այսուհետ նաև՝ Պայմանագիր) վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-10/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԳԲԽ-10/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 18.03.2016թ. թիվ 1/73-1/10188-16 գրությամբ ներկայացված «ԵՎՐՈԼԻՖՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «ԵՎՐՈԼԻՖՏ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) միջև 09.02.2015թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-15/1-1» ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

2. Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, սահմանվել են Ընկերության կողմից մատակարարվող հետևյալ ապրանքները՝ մետաղական ճոպան 7.8 մմ (քանակը՝ 3218 մետր), մետաղական ճոպան 10.5 մմ (քանակը՝ 1370 մետր), կախովի մալուխ(քանակը՝ 150 մետր), դռների շրջանակ (քանակը՝ 150 հատ), հրամանի ապարատ (քանակը՝ 50 հատ), կանչի կոճակ (քանակը՝ 200 հատ), տանող անիվ (քանակը՝ 3 հատ), գլխավոր շարժիչ (քանակը՝ 5 հատ), վերելակի դռներ

(քանակը՝ 100 հատ), էլ. հոսանքի պաշտպանիչ (քանակը՝ 50 հատ), վերելակների խցիկի պատեր (քանակը՝ 20 կոմպլ.):

3. Պայմանագրի 9.11. կետով նախատեսված Գնորդի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը՝ վարչական շրջանի ղեկավարի 23.06.2015թ. թիվ 24/1-10/1024Ել և 02.07.2015թ. թիվ 24/1-10/1113Ել գրություններով առաջարկել է Ընկերությանը մինչև 06.07.2015թ. մատակարարել համապատասխան ապրանքները, սակայն սահմանված ժամկետում այն չի մատակարարվել:

4. Ընկերությունը 30.07.2015թ. գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ «ԵՎՐՈԼԻՖՏ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է 8927309 ՀՀ դրամի ապրանք, որից հետո գնման առարկայի շուկայական գները կտրուկ աճել են, որի հետևանքով պայմանագրային պարտավորությունների հետագա կատարումը դարձել է անարդյունավետ և Ընկերությունը խնդրել է Պայմանագիրը լուծել մնացած 10672591 ՀՀ դրամի չափով:

5. Պատվիրատուն, հիմք ընդունելով Ընկերության վերը նշված գրությունը, 14.08.2015թ. թիվ 61/2585 գրությամբ միակողմանի լուծել է Երևանի քաղաքապետարանի և «ԵՎՐՈԼԻՖՏ» ՍՊԸ-ի միջև 09.02.2015թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-15/1-1» ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիրը:

6. «ԵՎՐՈԼԻՖՏ» ՍՊԸ-ն 26.02.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերությունը չի կարողացել ամբողջությամբ մատակարարել «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-15/1-1» պայմանագրի գնման առարկա հանդիսացող ապրանքները, որի հետևանքով Պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանի լուծվել է:

7. Ըստ Պատվիրատուի ներկայացրած տեղեկանքի՝ Ընկերության կողմից չեն մատակարարվել Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, սահմանված ապրանքները, մասնավորապես՝ մետաղական ճոպան 7.8 մմ (քանակը՝ 1646 մետր), մետաղական ճոպան 10.5 մմ (քանակը՝ 715 մետր), կախովի մալուխ (քանակը՝ 80 մետր), դռների շրջանակ (քանակը՝ 80 հատ), հրամանի ապարատ (քանակը՝ 27 հատ), կանչի կոճակ (քանակը՝ 107 հատ), տանող անիվ (քանակը՝ 2

հատ), գլխավոր շարժիչ (քանակը՝ 3 հատ), վերելակի դռներ (քանակը՝ 54 հատ), էլ. հոսանքի պաշտպանիչ (քանակը՝ 27 հատ), վերելակների խցիկի պատեր (քանակը՝ 11 կոմպլ.):

8. Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված 17.03.2016թ. թիվ 01/04.1/1012-16 գրությամբ արձանագրել է «Եվրոլիֆտ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-15/1-1» ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագրով ստանձնած պարտավորություններն ավելի քան մեկ անգամ խախտելու առկայությունը և խնդրել Նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

9. ՀՀ ֆինանսների նախարարությունը, չտրամադրելով Կենտրոնին որևէ տեղեկատվություն խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, 18.03.2016թ. թիվ 1/73-1/10188-16 գրությամբ, վկայակոչել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 122.2-րդ և 123-րդ կետերը, պահանջել է նախաձեռնել «Եվրոլիֆտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

5. ՍՑ-ԳԲԽ-10/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.03.2016թ. թիվ 1/73-1/10188-16 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 25.08.2015թ. թիվ 01/61-18614 գրությունը և կից փաստաթղթերը, Ընկերության 26.02.2016թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի և «ԵՎՐՈԼԻՖՏ» ՍՊԸ-ի միջև 09.02.2015թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-15/1-1» ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիր 1.1 կետի համաձայն՝ «ԵՎՐՈԼԻՖՏ» ՍՊԸ-ն պարտավորվել է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով, Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել նույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգման համար անհրաժեշտ սարքավորումները (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել ապրանքը և այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում վարձատրել դրա համար:

Պայմանագրի 3.4.2. կետով սահմանվել է, որ «ԵՎՐՈԼԻՖՏ» ՍՊԸ-ն պարտավոր է ապրանքը Պատվիրատուին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Ընկերությունը էականորեն խախտել է Պայմանագիրը:

Պայմանագրի 3.1.7.1 կետի համաձայն՝ «ԵՎՐՈԼԻՖՏ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Երևանի քաղաքապետարանի և «ԵՎՐՈԼԻՖՏ» ՍՊԸ-ի միջև 2015 թվականի փետրվարի 20-ին կնքվել է համաձայնագիր N 1, որի ընդհանուր արժեքը կազմել է 19599900 ՀՀ դրամ:

Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, սահմանվել են Ընկերության կողմից մատակարարվող հետևյալ առանձին տեսակի ապրանքները՝ մետաղական ճոպան 7.8 մմ (քանակը՝ 3218 մետր), մետաղական ճոպան 10.5 մմ (քանակը՝ 1370 մետր), կախովի մալուխ(քանակը՝ 150 մետր), դռների շրջանակ (քանակը՝ 150 հատ), հրամանի ապարատ (քանակը՝ 50 հատ), կանչի կոճակ (քանակը՝ 200 հատ), տանող անիվ (քանակը՝ 3 հատ), գլխավոր շարժիչ (քանակը՝ 5 հատ), վերելակի դռներ (քանակը՝ 100 հատ), էլ. հոսանքի պաշտպանիչ (քանակը՝ 50 հատ), վերելակների խցիկի պատեր (քանակը՝ 20 կոմպլ.):

Ընկերությունը 30.07.2015թ. գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ «ԵՎՐՈԼԻՖՏ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է 8927309 ՀՀ դրամի ապրանք, որից հետո գնման առարկայի շուկայական գները կտրուկ աճել են, որի հետևանքով պայմանագրային պարտավորությունների հետգա կատարումը դարձել է անարդյունավետ և ***Ընկերությունը խնդրել է Պայմանագիրը լուծել մնացած 10672591 ՀՀ դրամի չափով***, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով, «ԵՎՐՈԼԻՖՏ» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, սահմանված առանձին տեսակի ապրանքները, մասնավորապես՝ մետաղական ճոպան 7.8 մմ (քանակը՝ 1646 մետր), մետաղական ճոպան 10.5 մմ (քանակը՝ 715 մետր), կախովի մալուխ (քանակը՝ 80 մետր), դռների շրջանակ (քանակը՝ 80 հատ), հրամանի ապարատ (քանակը՝ 27 հատ), կանչի կոճակ (քանակը՝ 107 հատ), տանող անիվ (քանակը՝ 2 հատ), գլխավոր շարժիչ (քանակը՝ 3 հատ), վերելակի դռներ (քանակը՝ 54 հատ), էլ. հոսանքի պաշտպանիչ (քանակը՝ 27 հատ), վերելակների խցիկի պատեր (քանակը՝ 11 կոմպլ.):

Կենտրոնը գտնում է, որ Ընկերության կողմից ***Պայմանագրով նախատեսված պարտավորությունները խախտվել են ավելի քան մեկ անգամ,*** ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից 14.08.2015թ. թիվ 61/2585 գրությամբ Պայմանագրի միակողմանի լուծմանը, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել «Գնումների

մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտումը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «ա» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ԵՎՐՈԼԻՖՏ» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Այսպիսով, Կենտրոնը արձանագրում է, որ «ԵՎՐՈԼԻՖՏ» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը,*** սակայն Ընկերությանը Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի*** ի հայտ գալու պայմաններում: Մինչդեռ մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-10/16 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելը՝ Կենտրոնը չունի որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից (14.08.2015թ.) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն «ԵՎՐՈԼԻՖՏ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 14.08.2015թ.-ից, հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ուստի առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 18.03.2016թ. թիվ 1/73-1/10188-16 գրությամբ ներկայացված «ԵՎՐՈԼԻՖՏ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03538344) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-10/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան